Համաձայնագիր

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին

Հայաստանի Հանրապետությունը և Վրաստանը, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով երկու պետությունների և իրենց ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները զարգացնելու, ինչպես նաև տնտեսական, առևտրային, գիտատեխնիկական, մշակութային և այլ կապերն ամրապնդելու ցանկությամբ,

նպատակ ունենալով հնարավորինս պարզեցնելու երկու Կողմերի պետությունների տարածքներում քաղաքացիների փոխադարձ այցելությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Մի Կողմի պետության քաղաքացիները, անկախ նրանց մշտական բնակության վայրից, իրավունք ունեն առանց մուտքի արտոնագրի, մուտք գործելու, գտնվելու, տարանցիկ երթևեկելու և դուրս գալու մյուս Կողմի պետության տարածքում՝ ընդունող պետության սահմանն անցնելու ամսաթվին հաջորդող ցանկացած 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում 90 (իննսուն) օրը չգերազանցող ժամանակահատվածով՝ սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներում թվարկված՝ ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի հիման վրա:

Հոդված 2

1. Որևէ Կողմի՝ դիվանագիտական կամ ծառայողական վավեր անձնագիր ունեցող, մյուս Կողմի պետության տարածքում գտնվող դիվանագիտական առաքելություններում, հյուպատոսական հիմնարկներում և

միջազգային կազմակերպություններում աշխատանքի նշանակված քաղաքացիներից չի պահանջվում մուտքի արտոնագիր՝ առաջին անգամ մյուս Կողմի տարածք մուտք գործելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դրույթները կիրառվում են նաև նշված անձանց ընտանիքի անդամների նկատմամբ, որոնք ունեն դիվանագիտական կամ ծառայողական վավեր անձնագրեր:

3. 1-ին և 2-րդ կետերում նշված անձանցից պահանջվում է մուտք գործելու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում դիմել համապատասխան հավատարմագրում ստանալու համար:

4. Յուրաքանչյուր Կողմ 30 (երեսուն) օրվա ընթացքում համապատասխան հավատարմագրում է տրամադրում 1-ին եւ 2-րդ կետերում նշված անձանց:

Հոդված 3

Մի Կողմի պետության քաղաքացիները կարող են մուտք գործել մյուս Կողմի տարածք, տարանցիկ երթևեկել կամ դուրս գալ այդ տարածքից միջազգային ուղեփոխադրումների համար նախատեսված սահմանային պաշտոնական անցակետերով:

Հոդված 4

Մի Կողմի քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու ընթացքում պահպանում են ընդունող պետությունում գործող օրենսդրությունը:

Հոդված 5

Սույն Համաձայնագրով չի սահմանափակվում որևէ Կողմի իրավունքը ներպետական օրենսդրության համաձայն մերժելու մյուս Կողմի այն քաղաքացիների մուտքն իր տարածք կամ կրճատելու իր տարածքում նրանց գտնվելու ժամանակահատվածը, որոնց այն կարող է համարել անցանկալի:

Հոդված 6

Կողմերը դիվանագիտական ուղիներով փոխանակում են սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներում նշված փաստաթղթերի նմուշները՝ սույն Համաձայնագիրը ստորագրելու ամսաթվին հաջորդող 30 (երեսուն) օրվա ընթացքում:

Կողմերը 48 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվող նոր կամ փոփոխված փաստաթղթերի շրջանառման կամ ներդրման կամ գործողության մեջ դնելու մասին և ոչ ուշ, քան դրանք ուժի մեջ մտնելու օրվանից 30 (երեսուն) օր առաջ միմյանց տրամադրում են դրանց նմուշները:

Հոդված 7

Կողմերն իրենց իրավունք են վերապահում ժամանակավորապես, ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելու սույն Համաձայնագրի կիրառումը՝ պետության անվտանգությանը, հասարակական կարգին կամ բնակչության առողջության պահպանմանը սպառնացող վտանգի դեպքում:

Սույն Համաձայնագրի գործողությունը կասեցնելու, ինչպես նաև դրա գործողությունը վերականգնելու մասին որոշում կայացրած Կողմը ոչ ուշ, քան այդ որոշումը կայացնելու պահից 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով ծանուցում է մյուս Կողմին:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի կիրարկման կամ մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է խորհրդակցությունների և (կամ) բանակցությունների միջոցով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրով չեն սահմանափակվում Կողմերի՝ այլ միջազգային

համաձայնագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց կողմերն են նրանք:

Հոդված 10

Եթե Կողմերի ներպետական օրենսդրությամբ սահմանվում են ավելի բարենպաստ պայմաններ, քան սույն Համաձայնագրով սահմանված պայմաններն են, ապա կիրառվում է ներպետական օրենսդրությունը:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածները կազմում են դրա բաղկացուցիչ մասը:

Սույն Համաձայնագրում և դրա հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնք կազմվում են առանձին փաստաթղթի ձևով: Դրանց արդյունքում կազմված փաստաթղթերը համարվում են սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ուղարկելով գրավոր ծանուցում: Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է մյուս Կողմի կողմից այդ ծանուցումը ստանալուց 3 (երեք) ամիս հետո:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից կդադարի 1993

թվականի մայիսի 19-ին կնքված՝ «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց վիզաների տեղաշարժման մասին» համաձայնագրի գործողությունը:

Կատարված է Երևանում 2023 թվականի հունվարի 12-ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝

Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին

Հավելված 1

Վրաստանի քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, գտնվելու, տարանցիկ երթեւեկելու և այնտեղից դուրս գալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկ.

1. Վրաստանի քաղաքացու անձնագիր.

2. Վրաստանի քաղաքացու ծառայողական անձնագիր.

3. Վրաստանի քաղաքացու դիվանագիտական անձնագիր.

4. Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային նույնականացման քարտ (միայն երկու կողմերի տարածքների միջեւ ճամփորդելիս, այդ թվում՝ ուղիղ թռիչքներից օգտվելու դեպքում).

5. Վրաստան վերադառնալու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթուղթ (միայն Վրաստան վերադառնալու համար):

Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Վրաստանի տարածք մուտք գործելու, գտնվելու, տարանցիկ երթեւեկելու և այնտեղից դուրս գալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր.

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու դիվանագիտական անձնագիր.

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտ (տվյալների էլեկտրոնային կրիչ պարունակող) (միայն երկու Կողմերի տարածքների միջեւ ճամփորդելիս, այդ թվում՝ ուղիղ թռիչքներից օգտվելու դեպքում): Քաղաքացին կարող է ճամփորդել նույնականացման քարտով, եթե Հայաստանի Հանրապետության սահմանային անցակետը հատելիս Հայաստանի Հանրապետության համապատասխան էլեկտրոնային շտեմարանում երեւում է, որ վերջինս ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու վավեր անձնագիր՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունում վավերականության ժամկետի նշումով:

4. Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթուղթ (միայն Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար):

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի հունվարի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության պետ՝

Նելլի Սարոյան